ՄՏԱԿԵՐՏՎԱԾՔԻ ՈՒ ՄՏԱԿԵՑՎԱԾՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

Անի Հարությունյան
ԵՊՀ, Փիլիսոփայության պատմության տեսության ու տրամաբանության ամբիոն, հայցորդ
vsuphilosophy@gmail.com, +374 94 745737

Խնդրի լուսաբանման պատճառը պայմանավորված է ժամանակակից աշխարհում մարդու՝ ինքն իրեն անդադար որոնելու ու բացահայտածի հետ անհաշտ պայքարի հետ: Հոգևոր ճգնաժամ ապրող աշխարհաքաղաքացին ջանում է վերծանել կեցության գաղտնագիրը: Եվ որպես դրա անդրադարձ նա քննադատական հայացք է նետում մտածականի ստեղծման ֆենոմենին ու վերջինիս ակունքներին: Սրանով պայմանավորված՝ հոդվածում փորձ է արվում ներկայացնել մտակերտվածքի կառուցվածքաբանական պատկերը հասարակական գիտակցության օբյեկտի ու սուբյեկտի փոխհարաբերության դիրքերից, որն իրականացվում է մինչ այդ հնչեցված գաղափարական դիտարկումների տրամաբանական հավաքագրմամբ: Այնուհետ, վեր է հանվում այլ եզրույթի՝ մտակեցվածքի իմացական ծանրաբեռնվածությունը ու բացորոշվում է վերջինիս կարգավիճակն իբրև նախապայման նախորդ հասկացույթի գոյության համար: Վերջում բխեցվում է դրանց փիլիսոփայական նշանակությունը:

Հիմնաբառեր. *մտակերտվածք, մտակեցվածք, փիլիսոփայություն, հավաքական գիտակցություն, անգիտակցական:*

Արդիականություն, նպատակներ, մեթոդ, ուսումնասիրվածության աստիճան

Փիլիսոփայության մեջ «մտակերտվածք» ու «մտակեցվածք» եզրույթների բովանդակային համայնապատկերի լուսաբանումը պարտադիր է, քանի որ դրանց իմաստային սահմանումները մշտապես շփոթվել են: Պետք է նկատել, որ մինչ այժմ նմանօրինակ հայալեզու հետազոտություն չի արվել, և այդ պատճառով ոլորտի ներկայացուցիչը հնարավորություն չունի ըմռնելու, թե բովանդակային ինչ ամփոփում են

դրանք կրում: Մեր գիտական տիրույթում տերմինները որպես բառեր գոյություն ունեն, բայց էութենական տարանջատում արված չէ:

Հոդվածի նպատակը մարդու մտային կառուցվածքի հիմքը հասկանալն է, որը և հանդիսանում է ելակետ աշխարհի իմացության գործում: Արդյունքում բացահայտվում է, թե քննարկվող եզրույթներից ամեն մեկը «պատասխանատվության» ինչ շրջանակ ունի այդ գործում: Օգտագործվել է գոյություն ունեցող սակավաթիվ անգլալեզու, ռուսալեզու գրականություն: Վերտառությունից մակաբերվում է վերլուծության մեթոդը. այն պատմահամեմատականն է:

Դեռևս Արիստոտելի ժամանակներից բանական էակի մտային առաջին փորձերն ուղղված են եղել բացահայտմանը՝ ի դեմս աշխարհի թե՛ գոյաբանական, թե՛ իմացաբանական ակունքներին: Եթե մետաֆիզիկական կենսաշխարհում հետազոտության քննարկման թիրախում են հայտնվել ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարի «դասական»-ի պիտակը կրող կատեգորիաները (տարածություն, ժամանակ, կեցություն, մատերիա), ապա ճանաչողության ներուժի վերծանումն անխուսափելիորեն առնչություն է ներկայացրել բանականության ու գիտակցության՝ մտահայեցողության հետ:

Ժամանակային տարբեր հարթակներում մարդը այս կամ այն կերպ պայմանավորել է իր լինելիության իմացական կողմնորոշիչը, մի դեպքում դրևորվելով՝ ըստ հասարակական «թելադրության», ի դեմս մշակույթի, կրոնի ու հոգևորին այլևայլ ծառայեցման ակունքների, իսկ մյուս դեպքում ուղղորդիչ ընտրելով ազգային-գաղափարաբանականը: Բայց հստակ է, որ երկուստեք մարդը լիիրավ տիրապետող է դարձել իր մտածելու կերպին այն պարագայում, երբ ունակություն է ունեցել վեր հանելու իր ճանաչելու հնարավորությունները՝ անկախ իրեն լռելյայն հատկացվող ու այդ իմաստով պարտադրվող խոչընդոտների բարդույթից: Իսկ վերջիններից մեկն ու, ըստ հավանականի, ամենահիմնայինը, լեզվականն է: Հղում անելով 17-րդ դարում աշխարհաճանաչողության գործընթացում հանդիպող արգելանքների կամ «ուրվականների» առկայության հրատարակիչ Ֆ.Բեկոնին, ով հայտարարեց «Գիտելիքը ուժ» է, դրանով իսկ պարզորոշ ընդգծելով իմացական տիրույթին իր կողմից հատկացվող առանձնահատուկ վերաբերմունքը, կարելի է ցույց տալ այն վտանգները, որոնք միտում ունեն կասեցնելու մտածողության և, ի մասնավորի, ճանաչողության գործընթացը: Հոգևոր այս

գործունեության մեջ կեցութային առանցք վերագրելով իմացության գործընթացում ընտրված մեթոդին՝ «Նոր Օրգանոն» աշխատության մեջ նա անդրադարձ է կատարում թվով չորս «ուրվականներին» կամ «կուռքերին»: Մտածողի համար քննության թիրախը բառերի սխալ կիրառության արդյունքում սխալ մտածելու իրողությունն է: Ըստ ամենայնի, կարծել կուզեր, թե բառերը վերագրվում են երևույթներին զանգվածային մշակույթի անձնագիրը ստացած, ամբոխի հոգեբանությամբ օժտված հասարակության անհիմն որոշումների արդյունքում: Իսկ դա «զարմանալիորեն կաղապարում է բանականությունը» [1, c. 19]: Անցյալին նետված իմացական այս հայացքը հուշում ուներ, որ մարդն իր հաղորդակցման առաջնախաղում լիիրավ դեր է հատկացրել խոսքին, որն ապահովել է մեկմեկու միավորման կենսատու փաստը: Բայց հիմա, ժամանակակակից աշխարհում «քաղաքակրթության մայրամուտն» արձանագրած, իր դիմագիծը կորցրած վարքանմուշային հարաբերություններում ներկայացվում է անձի տեսակ, որը կարծես բնութենապես չի կրում նախնիների գենետիկ կոդը, և իր մարդակերտությունն արարում է՝ «խոսքային» հումքը հայթայթելով ոչ թե ըստ պատմական պատճառավորվածության սկզբունքի, այլ սեփական շահեկանության առաջնորդությամբ: Իրար չհասկանալու արդիական պատկերում բնության հետ անհամաքայլ ձևավորվեց մի միջավայր, որում «իմ» բառը նույնական չէ իմաստավոր «քոնին». խախտված է երիցս սնուցվող բառերի միանշանակության հունը: Գիտական հանրույթում այդօրինակությունը բոլոր ժամանակներում քննարկվել է սոփեստության ծածկի տակ, երբ տեսությունը չի ունեցել հիմնավոր փաստարկողական հենք, իսկ տեսակետը չի զանազանվել կարծիքից:

Եվ հեցն սա է պատճառը, որ այսօր քան երբևէ հետազատողն իր գործունեության մեջ ազնվության հայտն է ներկայացնում գիտական լեզվի ապարատի կառուցարկմամբ՝ ապահովելով ուսումնասիրության մեջ հանդիպող, կիրառվող տերմինների ստուգաբանական ստույգությունն ու իմաստային ծանրաբեռնվածությունը: Վերոգրյալով էլ պայմանավորված է նպատակադրվածությունը բացորոշել «մտակերտվածք» ու «մտակեցվածք» եզրույթների բովանդակային համայնապատկերը: Պարզաբանումներն այն հարցերին, թե ինչպես է ձևավորվել անհատի մտային էությունն ու արդյոք այն գոյություն ունի ինքնին, թե այն լոկ մշակույթի, սոցիումի, գուցե և համընդգրկուն կեցության

ապրման վկայությունն է, որոշակի իմաստով հնարավոր է ամփոփել այս երկու տերմինների շրջանակներում:

Մտակեցվածքի իմաստային առաջին մեկնությունը տվել է ամերիկացի փիլիսոփա Ռ.Էմերսոնը, երբ հոգու գլխավոր՝ փիլիսոփայական նշանակությանն էր վերագրում որպես արժեքների և ճշմարտության սկզբնաղբյուր հանդես գալը [6, p. 25]: Ասել կուզի, որ մտակեցվածքն է այս երկու կենսահենքերի համոզչականության վկայությունը:

Քննության առնելով «մտակեցվածք» հասկացույթը՝ հետազոտության առաջին քայլերին հանդիպում են ձևակերպումներ գիտության ու փիլիսոփայության պատմության տարբեր դրվագներում այս տերմինի ոչ միանշանակության առթիվ: Եվ իսկապես, եթե հղում կատարենք եզրույթների ստուգաբանական մեկնաբանություններին, ապա կնկատենք, որ մասնագիտական գրականության մեջ առկա է դրանց ըմբռնման խրթին պատկեր, իսկ երբեմն նաև իմաստային նույնականացում: Մասնավորապես, արձանագրվում է մտակերտվածքի (менталитет)՝ որպես հավաքական գիտակցության խորքային մակարդակ լինելը, «որն իր մեջ է ներառում նաև անգիտակցականը» [4, с. 525] և մտակեցվածքի (ментальность)՝ «անհատի կողմից աշխարհը որոշակի կերպ ընկալելուն ծառայող նախատրամադրվածությունների ու մտադրությունների ամբողջություն» [4, с. 525] բացատրությունը: Ելնելով մտակեցվածքի՝ լինելիության հիմնավորման բացահայտման դիրքերից, պետք է նկատել, որ հասկացույթի՝ որպես անհատական գիտակցության հենասյուն լինելու դրույթը պատմափիլիսոփայական հարթակում ևս տեղ գտել էր, սակայն ծայրահեղ բևեռացման ակնարկը սոցիալականի և անհատականի միջև իր քննադատական տեսականն է պատկերում հատուկենտ մտածողների մոտ[25]:

Աշխարհի մտածական կառուցարկման մոդելում մտակեցվածքին երբեմն վերագրվել է կենսաշխարհում մարդու բնակության ապահովման համար հարկավոր ազգային բնութագրիչների ձևակերտման լուսացույցի դերակատարում: Որքան էլ այսօր նորաձև է շրջանառել «լուսանցքային» իրականություն բառակապակցությունը, տարածաշրջա-

[25] Այս առնչությամբ տեղին է առանձնահատուկ շեշտադրել Մ.Լուտցևին. տե՛ս Лутцев М.В. Менталитет и ментальность как феномены бытия личности, общества и Вооруженных Сил (социально-философский анализ): автореферат диссертации канд. филос. наук. М., 2005, էջ 22-24:

նային հարմըբռնելի բախումները բարձրագոչ հայտարարում են հատկապես մշակութային հատվածականության մասին: Եվ այս առթիվ արդիական է համարվում մտակեցվածքի ու մտակերտվածքի պատճառահետևանքային կապի վերհանումն՝ ի հեճուկս վերոնշյալ բինարային ընդդիմության սկզբունքի: Մտակերտվածքը ազգը «ազգային» դարձնող տարրերի միասնությունն է, որը գոյություն ունի, քանի որ կա մտակեցվածք՝ այդ ամբողջականության գոյության պատճառը:

Ի հեճուկս այս տարահիմք վերծանումների՝ մասնագիտական գրականությունը, իսկ ավելի կոնկրետ, անգլալեզու փիլիսոփայական միտքը, տրամադրում է քննարկվող եզրույթների սահմանման լիարժեք համընկնում: Երկուսի համար էլ կիրառելով «Mentality»-ն՝ այն սահմանվում է իբրև «մտքի որակ, որը բնութագրում է անհատին կամ անհատների խումբ» [7, p. 484]:

Որպես գիտական հասկացություն «մտակեցվածք» բառն առաջին անգամ կիրառվել է ֆրանսիացի փիլիսոփա և ազգագրագետ Լ.Լեվի-Բրյուլի կողմից: Նա առանձնացնում է երկու տեսակի մտակեցվածք՝ նախատրամաբանական և տրամաբանական: Առաջինը վերագրվում էր տոհմացեղային հանրույթը որպես հասարակության նախատիպ ընդունած ժողովուրդներին, գլխավորապես, ավստրալիացիներին ու աֆրիկացիներին՝ իրենց ձևավորումից ի վեր ցուցադրած պահպանողականությամբ և միասնական գործելակերպով հանդերձ: Մի մտածականություն, որը անհամաչափ էր Եվրոպայի բնակիչների ռացիոնալ մտածողության հետ [3, стр. 24-37]: Հեղինակը, հավանաբար, միտում ուներ մատնանշելու, որ մարդու մտքի ձևավորման հիմքը անպայման կախում ունի թե՛ իր բնակության աշխարհագրական, թե՛ սոցիալական ու թե՛ ժամանակագրական չափորոշիչներից: Այս տեսակետի օգտին է կարծես հարում մտակեցվածքների փիլիսոփայական մեկնության զարգացումն ապահովող մի դիտարկում, որը առաջ է բերում մտակեցվածքների տիպերի համակարգման հնարավորությունը: Սակայն այս մոդելում խնդրո առարկան ցուցադրում է կախվածություն արտաքին աշխարհի հասկացման եղանակից, երբ, ի մասնավորի, դրա էությունն են պայմանավորում կրոնական, լեզվական դրսևորման կերպերը[26]:

[26] Հարցի քննության այս տեսանկյունը առաջին անգամ ներկայացրել է նեոկանտականության փիլիսոփայության հավատարմորդ Է.Կասիրերը. տե՛ս Кассирер Э., Избранное. Опыт о человеке. – М.: Гардарика, 1998. 784 с.

Ինչ վերաբերում է մտակեցվածքի փիլիսոփայական դիտարկման հիմքերին, ապա դրանք ի հայտ են եկել XX դարի 30-ական թթ. ֆրանսիական «Աննալներ» պատմական դպրոցի մտածողների մոտ: Դպրոցի համահիմնադիր կամ առաջին սերնդի ներկայացուցիչ Լ.Ֆեվրը մտակեցվածքը բացատրում է սոցիալ-պատմական հոգեբանության տեսանկյունից: Ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ մարդն իր մտածական սովորությունները, ընկալման եղանակներն ու հույզերը յուրացնում է առանց դրանց հստակ գիտակցման, և հենց այդ «ժառանգությունն» էլ, ըստ ամենայնի, ձևավորում է մարդ էակին: Այդօրինակ հաստատուն պատկերացումները «մուտքագրվում» են մարդկանց գիտակցության մեջ մշակույթի, ինչպես նաև սոցիալական փոխազդեցության արդյունքում ստացվող դաստիարակության միջոցով: Արդյունքում մտակեցվածքի ըմբռնումը մտածողը ներկայացնում է ոչ թե որպես կենսաբանական հաստատուն, այլ պատմականորեն ձևավորվելիք կառուցվածքային միավոր, որը պայմանավորում է մարդկանց վարքը, արժեքները, զգացմունքները և մտքերը:

Տարիներ անց Ժ.Դյուբին, ով պատկանում է վերոնշյալ դպրոցի երկրորդ սերնդին, տալիս է մտակեցվածքի ավելի կոնկրետ սահմանում՝ «այն պատկերացումների համակարգ է, …որն…ընկած է աշխարհի վերաբերյալ մարդու ու դրանում իր ունենալիք տեղի մասին հայացքների հիմքում, և որը որոշում է մարդկանց վարքագիծն ու կատարվելիք քայլերը» [2, c. 52]:

Հետաքրքիր է նկատել, որ մտակերտվածքի ու մտակեցվածքի բովանդակային հարաբերակցության ոչ միանշանակության պարզաբանման մեթոդաբանական խնդրի շուրջ առաջին անգամ մասնագիտական կլոր սեղան-քննարկում է ծավալվել ռուսալեզու գիտափիլիսոփայական տիրույթում 1993 թ., որի եզրակափակիչ դրույթները տպագրվել են «Փիլիսոփայության հարցերը» («Вопросы философии») գիտական հանդեսում:

Անցում կատարելով մտակերտվածքին՝ նշել է պետք, որ այն ուսումնասիրման ինքնուրույն առարկայի կարգավիճակում գիտության մեջ շրջանառվել է XX դարի 40-ական թթ.-ից ի վեր, սակայն ֆենոմենի հետազոտման որոշ տեսանկյուններ արժանացել են մտահայեցողական տարբեր ուղղվածությունների ու դպրոցների ներկայացուցիչների ուշադրությանն ավելի վաղ շրջանում: Մի շարք փիլիսոփաների մշա-

կումներում (Շ.Մոնտեսքյո, Յ.Հերդեր, Գ.Հեգել, Իմ.Կանտ և այլք) երբեմն մտակերտվածքը զարգացում է ապրել այս կամ այն «ազգի ոգու» մասին գաղափարի համատեքստում՝ նույնականացնելով մտակերտվածքն ու ազգային դիմագիծը: Այդուհետ, «հոգեփիլիսոփայական ազգագրության» զարգացումն ապահովել են XIX դարի վերջին և XX դ. սկզբին ռուս կրոնական փիլիսոփայության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Վ.Սոլովյովը, Լ.Լոսկին, Գ.Ֆեդոտովը: Իսկ արդեն սոցիալական փիլիսոփայության ոսպնյակով մտակերտվածքը լրջագույնս դիտարկվել է Ն.Բերդյաևի, Ս.Ֆրանկի ու Ա. Դմիտրիևայի գրվածքներում:

Հարկ է ամրագրել, որ եզրույթների՝ մեկը մյուսի միջոցով կամ միմյանց շնորհիվ գոյություն ունենալու ամենաակնառու իմաստային մեկնություններից մեկում խոսվում է մտակերտվածքի կողմից մտակեցվածքի ծավալային ներառման մասին, երբ վեր են հանվում կեցության սոցիալական, պատմական, տարածքային, կրոնական մակարդակները [5, стр.17-30]:

Մտակերտվածքի կառուցվածքաբանությունն ուսումնասիրելիս արժանահավատ է ակնդետ լինել տեսակավորումներից այն մեկի նկատմամբ, որում առանցքային է համարվում հասարակական գիտակցության սուբյեկտի ու օբյեկտի փոխհարաբերությունը: Եվ այսու, եզրույթի բովանդակության բազմաբևեռությունը կարելի է ամփոփել կառուցվածքային մակարդակների հետևյալ առանձնացմամբ, որտեղ մտակերտվածքը պարունակում է՝

- մասնավոր (պարտիկուլյար) շերտ կամ, որ նույնն է, անգիտակցական. արտացոլում է մասնավոր կյանքի ընդհանուր միտումները և մեծապես պատճառավորում է անձի սոցիալական դերերի ձևավորումն, ինչպես նաև այլոց հետ փոխհարաբերությունների բնույթը: Այս մակարդակում կենցաղային հարաբերությունները միատեղվում են ծեսերի, սոցիալական նորմերի, արժեքների հետ: Փաստորեն, մակարդակներից առաջինը ներկայացնում է սոցիալական փոխազդեցությունների աշխարհը, որի նկատմամբ հնարավոր չէ կիրառել վերադարձի «սեղմակը» այն վերափոխելու իմաստով;
- «հոգևոր ինքնության» շերտ. սոցիալական կոնկրետ հանրույթի մշակույթ, դրա յուրատիպությունը, հարմարվողականության ու-

նակությունները, որոնք դրսևորվում են անդրադարձի ապահովման մակարդակում;

- սոցիալական արձագանքի շերտ. անհատի կամ հանրույթի արձագանքը քաղաքական իրողություններին ու պետական իշխանությանն առհասարակ;
- մետասոցիալական շերտ. դեպի արտաքին միջավայր ու նեբրաաշխարհի անդադարձներ կատարելով ձևավորվելիք էթնոմշակութային կողմնորոշում (օր.՝ ազգային գաղափարաբանություն):

Ահա այն չորս բաղկացուցիչները, որոնց հանրագումարը և ներկայացնում է եզրույթներից երկրորդի իմաստն ու էությունը:

Արդյունքում բացահայտվեց ոչ այնքան շրջանառվող հասկացույթների իմացաբանական գերակայությունը մեկը մյուսի նկատմամբ, այլ դրանց բովանդակության կոնկրետ շրջանակները: Ամփոփելով եզրույթների պատմափիլիսոփական մեկնությունը՝ համահավաք է թվում ելնել մտակերտվածքի՝ իբրև անհատի սոցիալականացման իրողության տեսանելի դրսևորումն ապահովող հենքի դիրքերից, իսկ մտակեցվածքի համար որպես կատեգորիա ընդունելի համարել մտքի որակի սահմանումը, որը հանդիսանում է նախահիմք հավաքական գիտակցության լինելիության կայացման համար:

Այսպիսով, մտակերտվածքն իր փիլիսոփայական արժեքն է արտահայտում սոցիալական հավաքականության դաշտում, իսկ ահա մտակեցվածքի գոյությունը պատճառավորվում է գլխավորապես փիլիսոփայական մարդաբանության մեջ արդիական մարդու սոցիալ-կենսաբանական՝ անթրոպոսոցիոգեն գործընթացն ապրելու հրամայականով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Бэкон Ф. Сочинения в двух томах. 2-е испр. и доп. изд. Т. 2. Изд.-во Мысль, Москва, 1978.
2. Дюби Ж. Развитие исторических исследований во Франции после 1950 года // Одиссей. Человек в истории. Под ред. А.Я. Гуревича. Москва, 1991.
3. Леви Бруль Л. Первобытное мышление: коллективные представления в сознании первобытных людей и их мистический характер. Академический проект, Москва, 2015.

4. Новая философская энциклопедия: в 4 т. Т. 2, Изд.-во Мысль, Москва, 2010.
5. Южалина Н. С. Менталитет как социокультурная целостность: автореф. диссертации канд. культурологии. Челябинск, 2003.
6. Emerson R.W., English traits., Boston: Phillips, Sampson and Company 1856.
7. Reber A. S. The penguin dictionary of psychology. New York, 2009.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕНТАЛИТЕТА И МЕНТАЛЬНОСТИ: ФИЛОСОФСКИЙ ВЗГЛЯД

Ани Арутюнян
ЕГУ, Кафедра истории философии, Соискатель

Причина изучения данной проблемы обусловлена постоянным поиском человека найти себя в современном мире, а также с бескомпромиссной борьбой с тем, что он раскрывает. Проживающий духовный кризис человек-космополит пытается расшифровать код бытия. В качестве этой рефлексии он бросает критический взгляд на феномен формирования своего мышления и его истоков. Именно поэтому статья являет собой попытку представить структурную картину менталитета в свете взаимосвязи объекта и субъекта общественного сознания, которая преподносится как логический конгломерат идеологических наблюдений, выявленных до этого момента. Далее, излагается когнитивная нагрузка другого термина, а именно, ментальности, которая, как выяснится, является основополагающим для существования предыдущего. В конце выявляется философское значение этих понятий.

Ключевые слова: менталитет, ментальность, философия, коллективное сознание, бессознательное.

THE COMPARATIVE ANALYSIS OF MENTALITY AND MENTAL SETUP: PHILOSOPHICAL INSIGHT

Ани Harutyunyan
YSU, Chair of History of Philosophy, Researcher

The reason for studying the problem is determined by a person's constant search for himself in the modern world by an uncompromising struggle with what he discloses. A cosmopolitan man suffering a spiritual crisis tries to decipher the code of being. He critically looks at the phenomenon of thinking formation and its origins. The article presents a structural picture of the mental setup by the interconnection of the object and subject of social consciousness. Further, it outlines the cognitive load of mentality which serves as a basis for the existence of the previous ideological observations. Their philosophical significance is also revealed in the article.

Keywords: mentality, mental setup, philosophy, collective consciousness, unconsciousness.

Ընդունվել է տպագրության՝ 15.10.2019թ.
Գրախոսվել է՝ 12.11.2019թ.